ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-8/14» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՄԱՆ(ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 07-ը սեպտեմբերի 2022թ.
Ժամը 15^{00}

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ԹԱ վարչության պետ Հ. Մելիքյան /ԳԱՊ/,
ՀՀ ՊՆ ԳԿ ՎՏՎ տնտեսական բաժնի պետ Մ.Ամիրյան,
ՀՀ ՊՆ ԳԿ վերլուծության և պլանավորման բաժնի ավագ մանագետ Ա. Բարսեղյան,
Բացակայում էր՝ ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ԹԱ վարչության ապահովման 2-րդ բաժնի պետ Է. Համբարձումյանը:
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության գնումների կազմակերպման վարչության գնումների կազմակերպման 2-րդ բաժնի ավագ մասնագետ, Ն. Թադևոսյան:

« ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-8/14» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ն. Թադևոսյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.
2.«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-8/14» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4 Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-8/14» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Ն. Թադևոսյան)

ՀՀ ՊՆ կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-8/14» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/h	Մասնակցի անվանում
1	«ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ
2	«ՋԻ ՋԻ ԿՈՆՑԵՌՆ» ՍՊԸ
3	«ՄԱՅ ՄԱՐԿԵՏ» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2 .« ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-8/14» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Ն. Թադևոսյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը **www.armeps.am** կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:
2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:
2.3 Մասնակիցների հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-8/14» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին),բացառությամբ՝
- «Ջի Ջի Կոնցեռն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում են Հավելված 1-ը (դիմում հայտարարություն),եթե Հավելված N 1-ում իրական շահառուի վերաբերյալ տեղեկությունները կայքէջի հղումով չէ նաև Հավելված N 1.3-ը (իրական շահառուի վերաբերյալ հայտարարագիրը) Հավելված N 1.1-ը (ներկայացվող ապրանքի տեխնիկական բնութագիրը) և տնօրենի կողմից Լաուրա Վարդանյանին տրված լիազորագիրը՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ ստորագրելու իրավասության վերաբերյալ (քանի որ ներկայացված փաստաթուղթը էլեկտրոնային թվային ստորագրությամբ ստորագրել է Լաուրա Վարդանյանը):

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը 07.09.2022թ. գնահատող հանձնաժողովը կասեցրել է հայտերի գնահատման նիստը և մասնակցին ծանուցել անհամապատասխանության շտկման վերաբերյալ:

Սահմանված ժամկետում «Ջի Ջի Կոնցեռն» ՍՊԸ-ն ներկայացրել է Հավելված 1-ը՝ դիմում հայտարարությունում նշելով ոչ միայն այն չափաբաժինները որոնց համար նեկայացրել է գնային առաջարկ (2-րդ և 3-րդ չափաբաժիններ), այլ նաև 1-ին, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ չափաբաժինները, Հավելված N 1.3-ը (իրական շահառուի վերաբերյալ հայտարարագիրը), Հավելված N 1.1-ը՝ ներկայացվող ապրանքի տեխնիկական բնութագրում ներկայացրել է ոչ միայն 2-րդ և 3-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերը, այլ նաև 1-ին, 6-րդ և 8-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերը և լիազորագիրը՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ ստորագրելու իրավասության վերաբերյալ:Հաշվի առնելով վերոնշյալը գնահատող հանձնաժողովը սույն ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին) համապատասխան գնահատեց մասնակցի հայտը միայն 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով, քանի որ գնային առաջարկ է ներկայացվել միայն այդ չափաբաժինների մասով, ուստի մնացած չափաբաժինները չդիտարկվեցին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Ն. Թադևոսյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել 3 մասնակից.

Հ/Հ	Ապրանքի անվանումը	Հ/Մ	Քանակը	Նախահաշվ. գումարը	Ընտրված կազմակերպության			Մրցույթին մասնակցող այլ կազմակերպությունների		
					անվանումը	գինը		անվանումները	գինը	
						առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով		առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով
1	Սրիչ	հատ	4240	419 760				«Մայ Մարկետ» ՍՊԸ	335666.67	402800
2	Տետր/Տետր (12 թերթ)	հատ	32000	1 760 000				«Ջի Ջի Կոնցեռն» ՍՊԸ	1412500	1695000
3	Տետր/Տետր (40 թերթ)	հատ	32000	3 200 000				«Ջի Ջի Կոնցեռն» ՍՊԸ	2662500	3195000
4	Կավճապատ թուղթ/Թուղթ կավճապատ SR A3 250գր	կգ	460.8	1 105 920	Չկայացած հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը (ոչ մի հայտ չի ներկայացվել)					
5	Գրիչ գնդիկավոր/Գրիչ	հատ	250	110 000	Չկայացած հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը (ոչ մի հայտ չի ներկայացվել)					
6	Թանաք տպագրական մեքենաների համար/Ներկ Riso SF 9350	հատ	70	1 540 000	Չկայացած հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը (ոչ մի հայտ չի ներկայացվել)					
7	Տպագրական սարքերի մասեր և պարագաներ/Մաստեր թաղանթ Riso SF 9350	հատ	10	365 000	Չկայացած հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը (ոչ մի հայտ չի ներկայացվել)					
8	Տոներային քարտրիջներ/Տոներ - քարթրիջ Kyosera M 4132 I DN	հատ	5	90 000				«Պատրոն» ՌՄ ՍՊԸ	462500	555000

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 Քանի որ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-8/14» ծածկագրով ընթացակարգի 1-ին, 2-րդ, 3-րդ և 8-րդ չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին, ինչպես նաև 8-րդ չափաբաժնի մասով հայտ ներկայացրած մասնակցի գնային առաջարկը գերազանցում է նախատեսված ֆինանսական միջոցները, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի պահանջները,որոշեց գների նվազեցման նպատակով 12.09.2022թ. բավարար գնահատված և վերոնշյալ չափաբաժինների մասով գնային առաջարկ ներկայացրած մասնակցներին ծանուցել 15.09.2022թ բանակցությունների վարման վերաբերյալ: Սահմանված ժամկետում մասնակիցները չեն ներկայացել բանակցություններին և գնային առաջարկները մնացել են անփոփոխ:

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ չափաբաժինների մասով «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-8/14» ծածկագրով ընթացակարգը չի կայացել համաձայն Գնումների մասին" ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի (ոչ մի հայտ չի ներկայացվել), իսկ 8-րդ չափաբաժնի մասով «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-8/14» ծածկագրով ընթացակարգը չի կայացել համաձայն Գնումների մասին" ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-8/14» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին

(Ն.Թադևոսյան)

4.1 Հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը 16.09.2022թ.-ին, գնահատող հանձնաժողովը որոշեց ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-8/14» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար գնահատված մասնակիցներից ընտրված մասնակից հայտարարել՝

1. «Մայ Մարկետ» ՍՊԸ-ին 1-ին չափաբաժնի մասով,
2. «Ջի Ջի Կոնցեռն» ՍՊԸ-ին 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով

4.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել: Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-8/14» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն: Սույն ընթացակարգի մասով սահմանվում է տասնօրյա անգործության ժամկետ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ

(Ն.Թադևոսյան)

5.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-8/14» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող	Հ. Մելիքյան
Գնահատող	Մ.Ամիրյան
Գնահատող	Ա. Բարսեղյան
Գնումները համակարգող՝	Ն. Թադևոսյան